

կոլտ այդ միջոցներն ու զէնքերը պատրաստելու սուսալ ինքզինքը. այս է պատճառը իր հրատարակութիւններուն, իր օտարացած թարգմանութիւններուն, իր ընդօրինակութիւններուն, իր գործունէութեան, իր բեմին, իր Գպրոցին: Այս է իր Մատենադարանի նկարագիրն ալ:

## 2. Մտեւար-ընէն գրեցը:

Շատ գիւրին է մտաբերել թէ ազգի մը լուսաւորութեան համար գրչի եւ գրքի գործնականապէս կարեւորութիւն եւ յարգ ընծայող Պատրիարք մը՝ ճոխ Մատենադարանի մը հաստատութիւնը ապահոված պիտի ըլլար կարելի եղած բոլոր միջոցներով:

Կոլտի Մատենադարանը ուր էր, քանի՞ հատորներ է կը բաղկանար եւ ի՞նչ եղան ատոնք:

Ինձ ծանօթ յիշատակարաններու համեմատ կոլտէն յառաջ հարուստ Մատենադարան մ'ունենալու գաղափարը չկար Պոլսոյ մէջ: Այնպէս որ այս հայեացքով ալ կոլտի Մատենադարանը մեծ արժէք մը կ'ունենայ իբր հիմնագրութիւնը Պոլսոյ մէջ Ազգային Մատենադարանի մը: Վասն զի ինչ որ մնացած է կոլտի Գպրոցէն, ատոնք են որ կը կազմեն այսօր նոյն իսկ Պոլսոյ Ազգային Մատենադարանի (Ղալաթիա, Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ բակին մէջ) ամէնէն արժէքաւոր մասը. այսինքն՝ ձեռագիրներու բաժինը եւ հայերէն հնագոյն տպագրութեանց կարեւոր մէկ շարքը:

Ասով չենք ուզեր բսել թէ կոլտ ծրագրած ըլլար Մատենադարանի մը հաստատութիւնը՝ Մատենադարաններու արդի դրութեամբ:

Իրաւ որ իր մտքէն չէ՛ անցած հասարակաց Մատենադարան մ'ունենալու խնդիրը: Բայց իրաւ է նաեւ որ իր բոլոր ձեռնարկութիւնները յառաջ պիտի բերէին այնչափ արդիւնքներ, որչափ պիտի բերէր Մատենադարան մը՝ մեր հասկցած ձեւով: